ՀԱՆԴԷՍ

ՊԱՐԳԵՒԱՌԱՇԽՈՒԹԵԱՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

12 ՕԳՈՍՏՈՍ 1861

Ուսումնական տարւոյն մէջ օր մը կայ, որուն մեծ ակնկալութեամբ կը սպասեն թէ աշակերտք և թէ ուսուցիչք որ և իցէ վարժարանաց. և ինչպէս որ բոլոր տարւոյն շրջանին մէջ այն օրը իբրև թէ իրենց ուսումնական ասպարեզին կէտը սահմանած են, և ամէն ջանք ու ճիգն անոր հասնելու համար զոհած, իրաւունք է որ նոյն օրը ամէնքը իրենց ջանից և քաջութեանը համեմատ պսակուին և վարձատրուին։

Եւրոպական որ և իցէ ծաղկեալ պետութեանց մէջ այս տարեւորական պարգեւաբաշխութեանց մեծապէս մտադրութիւն կ'ըլլայ և շատ փառաւոր հանդէսներով կը կատարուի, նոյն իսկ տէրութեանց պաշտօնէից ներկայութեամբը. վասն զի աղէկ իմացած են որ աշակերտաց՝ որով և ապագայ մարդկութեան՝ բարոյական և ուսումնական զարգացումը միայն վարժապետաց ջանքէն չկախուիր, այլ պէտք է որ թէ զմին և թէ զմիւսն քաջալերելու համար անոնց անցած աշխատանքը վարձատրուի, որպէս զի ապագային համար նոր ոյժ և զօրութիւն առնուն։

Մարդս երկար և տաժանական ճամբայ մը ըրած ատեն իր յոգնութիւնն ուրիշ կերպով չկրնար առնուլ և նոր ուժով իր ճամբան առաջ չկրնար տանիլ, ինչուան որ երբեմն երբեմն չկենայ, և բարձր լերան մը վրայէն չդառնայ և չտեսնէ թէ որչափ ճամբայ կորեր է, և որչափ դժուարութիւններէ անցեր։ Այս նկատմամբ ահաւասիկ մեր վարժարանն ալ ամէն տարի շքեղ հանդիսով կը կատարէ իր պարգեւաբաշխութեան հանդէսը։ Արդեանք ըսել որ այս

տարի ալ այս սովորական հանդէսնիս սովորականէն՝ աւելի շքեղութեամբ կա-
տարուեցաւ. և այս շքեղութեան պատճառ եղողներուն պէտք է որ վարժա-
պետաց և աշակերտաց կողմանէ շնորհակալութիւննիս ընենք։ Նախ Միաբա-
նութեանս Արհիապատիւ Աբբահօր, որ իր բազում զբաղմանց մէջն ալ հա-
ճեցաւ ընդունել մեր հրաւէրքն գալու և մօտէն տեսնելու վարժարանիս բարե-
կարգութիւնն ու յառաջադիմութիւնը, և կենդանի բարբառով իր գոհութիւնը
ցուցընելու, և իր օրհնութեամբն քաջալերելու դժուարին ասպարիզիս մէջ
զվարժապետս և զաշակերտս միանգամայն։ Երկրորդ՝ վսեմափայլ Մէլի Փա-
շային Օսմանեան պետութեան դեսպանին, որ ինքնամատոյց բարեհաճեցաւ
նախագահ բազմիլ այս պզտիկ գաղթականնիս հանդիսին մէջ, որ օտար աս-
տեղաց տակ պանդխտեալ հայրենեաց վերակենդանութեանը նահատակներ
կը պատրաստէ, արևմտեան ափանց լոյսը յարևելս ալ դարձընելով. և իր քա-
ջալերական և խրախուսիչ խօսքերովը կը պսակէր վարժապետաց աշխատանքը
և աշակերտաց յառաջադիմութիւնը։ Երրորդ՝ բոլոր ազգայնոց, որ մայրաքա-
ղաքիս մէջ կը գտնուին. որոնք ազգասէր և իմաստասէր հաճութեամբ միա-
բան ժողվուեր էին ներկայ գտնուելու այս կրօնից և գիտութեան տաճարիս
շքեղ հանդիսին մէջ, և հայրենեաց սեղանին վրայ սրտի և մտաց բոլորա-
նուէր զոհից կատարմանը։ Ո՞ւր թողունք Պարիզու մէջ գտնուած երևելի ա-
րևելագէտքն և ուսումնական անձինքն որոնք սիրով յանձնառու ըլլալով մեր
հրաւիրանացը՝ ինչպէս նաև Վարժարանիս բազմարդիւն վարժապետները
իրենց ընտանեօքը եկան ներկայ գտնուեցան հանդիսիս։ Բայց այս շնոր-
հակալութիւններէն մասնաւոր մասն հանելու է վարժարանիս բազմերախտ
Տեսչին Մ. Հ. Ղևոնդ վարդապետին, որ իրեն քերթողական և բանիբուն
աշխուժովն և հայրենասիրական եռանդեամբը նոյն իսկ օտարազգեաց սիրտը
վառեց, իրեն Հայաստանի հանքաբանական, բուսաբանական և կենդանա-
բանական հարստութեանցը վրայ գաղղիական լեզուով խօսած ճառովը, որն
որ վարժարանիս պարտիզին մէջ շարուած զինուորական երաժշտութեան
գունդին արիական նուագներէն պակաս ազդեցութիւն չէր ըներ ունկընդրաց
վրայ։

Բայց կրնանք մոռնալ նոյն իսկ այս հանդիսիս ախոյեաններն, այս ուսում-
նական ասպարիզիս նահատակները, վարժարանիս աշակերտները կ'ըսեմ, ո-
րոնց առանձին քննուած գիտութեանց մէջ ունեցած յառաջադիմութեանը
յայտնի վկայութիւնքն էին իրենց այլ և այլ լեզուներով ըրած բանախօսու-
թիւններն, ուրուագրութեան, իւղանկարի և գիւղանկարի աշխատութիւններն,
որով զարդարուած էին վարժարանիս նախասենեակները։ Որոնց մէջ մանաւանդ
հասարակաց գովեստի արժանի էին Տամատեան Պ. Յակոբին իւղաներկ ծո-
վային տեսարաններն, և Խլըմնճեան Պ. Մկրտչին իւղաներկ կենդանագիր-
ները։ Դարձեալ աշակերտաց երաժշտութեան քաղցր ներդաշնակութիւնքը,
զոր կը հնչէին կամարակապ սրահներուն ոսկեզօծ ցեղունները. որոնց մէջ հա-
սարակաց ծափահարութեան արժանի եղաւ Թովմասեան Պ. Յակոբին Ինք-
նահնար Պարն, որուն տպագրեալ օրինակներէն մէկ հատ մը հաճեցաւ վսեմա-

փայլ փաշային ընդունիլ*, և հանդիսականաց մէջէն խնդրողաց բաշխուեցաւ։ Այս յիշատակեալքս վարժարանիս աշակերտաց երիցագոյն դասէն էին, որոնք իրենց ուսումնական ընթացքն կատարելով՝ դարձան իրենց հայրենիքը հետերնին տանելով հանդիսականաց և վարժապետաց ուրախակցութեան և յաջողութեան մաղթանքներն իրենց դիմացը նոր բացուող աշխարհքին մէջն, ուր կը մտնէին իրենց վեցամեայ աշխատութեանց հասկերովն. և նախանձորդ ձգեցին իրենց շաւղացն զկրտսերագոյնսն, որոնք դեռ ևս իրենց դպրոցական կենաց արշալուսոյն վրայ են։

Ի Բարիզ 12 Օգոս. 1861։

ՎՍԵՄԱՓԱՅԼ ՎԷԼԻ ՓԱՇԱՅԻՆ ԽՕՍԱԾԸ

Տէրէճէյի տահսիլինիզի մէմուլ էտտիկիմ կիպի իշպու իմթիհանտէ կէօրտիւկիւմտէն քէնտիմի պահթիյար ատ էտէրէք հօճալէրինիզէ վալէ հուսուս նազարէթ վէ տիրայէթի պու կիւն պիր գաթ տահա միւսպէթ օլան նազըրընըզա թէշէքքիւր իլէ ճիւմլէնիզա պէյան ու մէմնունիյէթ էյլէրիմ վէլի իւլ նիմէթ պիմիննէթիմիզ բատիշահ էհիլ բէրվէր էֆէնտիմիզ հազրէթլէրինին պիլա իստիշա էսհապ հիւնէր վէ մաարիֆէթտէն օլան դապաասը հագգընտէ կէօստէրմէքտէ օլտուղի լուդֆ վէ միւրվէթ ճիւմլէնիզին մալիւմուտըր պէնտէն ալէյ վագտընըզը պօշ կէչիրմէյուպ իսթիգմալ հիւնէր վէ մաարիֆէթէ սարֆ մահասալ կայրէթլէ իպրազ րիւշտ վէ տիրայէթ իթմէնիզի վէ տէվլէթ վէ վադանըմըզա պէքլէնմէքտէ օլան խըզմէթլըն իֆասի իչուն սիզլէր տախի բէք պէօյլէ մէմուրիէթլէրտէ թամին պուլունարագ սամէյի հազրէթի շահանէտէ մազհարի միւքեաֆաթ օլմանըզը անսամիմ մէմուլ էտէրիմ։

* Այս Պարը (Mazurka) գնել ուզողն, կրնայ Պոլիս երաժշտութեան տետրեր ծախողաց քով գտնել։